ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶՊԵՏ

ՈՐՈՇՈՒՄ

«7» մարտի 2025 թվականի N: 73 - Ա ք.Գյումրի

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶԻ «ՀՈՎՈՒՆԻԻ ՄԻՋՆԱԿԱՐԳ ԴՊՐՈՑ» ՊԵՏԱԿԱՆ ՈՉ ԱՌԵՎՏՐԱՅԻՆ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅԱՆ ՏՆՕՐԵՆ ԱՍՏՂԻԿ ՊԵՏՐՈՍՅԱՆԻՆ ԵՐԵԽԱՅԻ ԽՆԱՄՔԻ ՀԱՄԱՐ ԱՐՁԱԿՈՒՐԴ ՏՐԱՄԱԴՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով Հայաստանի Հանրապետության աշխատանքային օրենսգրքի 171-րդ հոդվածի 2-րդ կետի, 173-րդ հոդվածի, «Պետական ոչ առևտրային կազմակերպությունների մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 15-րդ հոդվածի 1-ին և 6-րդ կետերի, 16-րդ հոդվածի 1.8-րդ կետի «բ» ենթակետի, Հայաստանի Հանրապետության կառավարության 2002 թվականի հուլիսի 25-ի N 1392-Ն որոշման 2.2-րդ և 6-րդ կետերի, նույն որոշմամբ սահմանված N 5 հավելվածի 44-րդ կետի դրույթներով, հիմք ընդունելով 2024 թվականի նոյեմբերի 12-ին տրված N ԲԱ927330 ծննդի մասին պետական վկայականը և Աստղիկ Պետրոսյանի 2025 թվականի փետրվարի 27-ի դիմումը.

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ Ե Մ՝

1. Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի «Հովունիի միջնակարգ դպրոց» պետական ոչ առևտրային կազմակերպության տնօրեն Աստղիկ Պետրոսյանին երեխայի խնամքի համար տրամադրել արձակուրդ՝ մինչև երեխայի երկու տարին լրանալը:

2. Արձակուրդի տևողությունը՝ 2025 թվականի մարտի 10-ից մինչև 2026 թվականի նոյեմբերի 2-ը:

3. Աստղիկ Պետրոսյանի արձակուրդում գտնվելու ընթացքում Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի «Հովունիի միջնակարգ դպրոց» պետական ոչ

առևտրային կազմակերպության տնօրենի պաշտոնակատար նշանակել նույն կազմակերպության ֆիզիկա, մաթեմատիկա և բնագիտություն առարկաների ուսուցիչ Գայանե Փիլոսյանին:

Դ.ԱՌՈՒՇԱՆՅԱՆ

Իսկականի հետ ճիշտ է